




## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

№ 667

C19260444

ՅԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՑ

# ՄՅՈՒՐ ԴԵ ՔԵԴԵՐԵ

(ԿՈՄՈՒՆԱՐՆԵՐԻ ՊԱՏԵ ՓԱՐԻԶՈՒՄ)



ՀԱՅԿԱ  
ԻՆ. ԿԱՄ.  
ВОСТОКОВЕД. Б-КА  
Академии Наук  
СССР

891.99

9-28

Յ Ե Դ Ե Ք Ե

Հրատարակւիլուն «Խորհրդային Հայաստան»-ի

№ 667

C1926.1444  
13 NOV 2017

Ca1354

ՅԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՑ

891.89

9-28

# ՄՅՈՒՐ ԴԵ ՖԵԴԵՐԵ

(ԿՈՄՈՒՆԱՐՆԵՐԻ ՊԱՏԸ ՓԱՐԻԶՈՒՄ)



БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИИ  
Академии Наук  
СССР

~~1823~~  
~~1823~~

Յ Ե Ր Ե Ղ Ս . Ն

Հրատարակություն «Խորհրդային Հայաստան»-ի

16 JUL 2013

48981

# Մ Յ Ո Ւ Ր Դ Ե Ֆ Ե Դ Ե Ր Ե

(ԿՈՄՈՒՆԱՐՆԵՐԻ ՊԱՏԸ ՓԱՐԻԶՈՒՄ)



3579-91

17-901

Գրառ. № 154. Տիրաժ 1000. Պատմ. 4856.  
Տպագրական տրեսի 2-րդ տպարան. Յերեվան:

Այս գրքում ներկայացվում են հիշատակներ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԵՆՆԻՍՏԻԱՆԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ

(ՄԱՐՏՈՒՆԻ) —

ընկերոջ, կոմունիստի, մարզու:

ՅԵ. ՉԱՐԵՆՅԱՆ

1925. 7. Ապրիլ  
Քերթն-Շաբուտենքուրդ

I. 1111

## Պ Ա Տ Ը

Եստե՛ղ ե:

«Մյուր դե Զեդերե՛»

Եսպե՛ս ե կոչվում եստեղ նա:

Բարձրացել ե դեմս հրեն:

Փլատակ ե:

Պատ ե դեղնած:

Մնացորդն ե առաջվա պատի:

Մի փտրրիկ կտորը:

Վոնց վոր եր՝

մնացել ե են որից եղպես:

Վրեն՝

հատիկ-հատիկ՝

զնդակների հետքեր:

Մեկ ել,

հենց եզ հին քարերի վրա,

վրեժից կիզված իր թակով՝

փորփրել ե դեմքեր

զարհուրած

մի քանդակագործ:

Քանդակել ե ապա նա մի կին,

վոր մեջքը քարերին հպած՝

անսահման ցասումը դեմքին,  
ստինքները բաց՝  
յերկարել և ձեռքերն, ահավոր,  
յեւ տենդոտ դեմքը թշնամուն՝  
մոռնում և՝

— La Commune est morte—  
vive la Commune!

Նա ի՛նքն և.  
Վոգի՛ն Կոմունի:  
Ծառացել և.  
Կարո՞ղ և ել ներել...  
Ու շուրջը—  
տղամարդ ու կին—  
նրա՛նք են.

— Փարիզի  
Կոմունարները:

Բարձրանում և սրտիցս ցասման անսայր ալիք:  
Ու գում եմ թվել յես նրանց:  
Բայց անթի՛վ են.  
Վո՞րը թվեմ:

— Եղ նրա՛նց և,  
յեկնելով Վերսալից՝  
սպիներով հնձել  
Գալիֆեն:  
Եղ նրանց վրայո՛վ և վոր՝  
պատվանդան շինելով եղ դիյե՛րը՝  
բարձրացել և մի որ  
Տյերը:

Եստեղ են խմբերով բերել  
ու հպել պատին:

Սուլել են գնդակները.  
դիպել են—  
աչբերին,  
կրժրերին,  
կամ բունրին մեկի, նակատին:

Ծակել են մարմինները:  
Մսերից անցել  
ու փորել են պատը:  
Սուլել են անընդհա՛տ, անընդհա՛տ:  
Կուտակվել են մինչև վ  
հենց ես պատի՛ առջև վր—  
դիակների պատեր:

Բարձրացրել են ձեռքերը վեր,  
ծալել են ձեռքերը կրժրներին:  
Սեղմել են մարմիններն իրենց—  
տեսնո՞ւմ ես՝ ես բարի՛ն:  
Զայրույթից պալթոյ աչբերով  
թրել են թշնամու սեխին:  
Վոնց վոր կարմիր դրոշ՝  
բարձրացրել և մայրն յերեխին:

Ու վոչ սարսափ, վոչ ան:  
Վոնց վոր սամում—  
վոռնացել են դեմքին թշնամու՝  
«—Vive la Commune!»

. . . . .  
. . . . .

Հիմի չկան նրանք:  
Հիմի չկան:  
Բայց տեսնո՞ւմ եմ յես ահա վոնց վոր  
հալարտով լյամբ գոցվող  
աչբե՛րն են կոմունար աղջկա:

Տեսնում եմ բոցն աչքերի,  
վոր վերջին վարկյանին թռած՝  
մնացել ե հրեն

փորփրած

են բարերի վրա:

Ու նայում ե:

Ի՛նձ ե նայում:

Պատրաստ ես — ասում ե: —

Հասկանում ես՝ վարկյանից մահու  
մենք եսպես — քնկած — սպասում ենք: —

Սպասում ենք՝ հպած ես պատին.

ականջներս ձայներով դեռ լեցուն են...

Մոտում ենք, վոր գար, ագատեր,

վոր բերեք — Կարմիր Հատուցումը...

. . . . .  
. . . . .

Փարիզ:

Մյուր Ֆեդերե: —

Յես,

պոետս,

լենինյան բոլշևիկս —

պատին կրթնած հրեն՝

լսում եմ նրանց ձայնը,

շշուկը:

Հասկանում եմ յես ձեզ, քնկերներ:

Մոտիկ եր դուք ինձ:

Հարազատ եք:

Մեկը թե գար հիմա յեզ ինձ հատեղ տեսներ՝

դժվար թե դեմքս նա ձեր դեմքերից գատեր:

Իհարկե, թշնամին թե գար՝

պիտի կարծեր, թե դեմքս

ձեր դեմքերից ե՝

զնդակով ես պատին քանդակած: —

Ձեր մտից եմ յես ել, քնկերներ,

իմ մեջ ե մարմնացել ձեր աճյունը:

Նայում եմ յես փորած ձեր դեմքերին հրեն —

յեզ մեկ-մեկ հանաչում եմ...

Հարկավոր եր յերկար դեզերել

ու հազար համբաներ մաշել,

վոր գայի, կանգնելի ձեր դեմ,

վոր հասնելի հատեղ —

Պեր-Լաշեզ:

Բայց չտեսած դեռ ձեզ

յես ձեզ գիտելի:

Յեղել եր դուք քնկեր

թե յերզիս, թե ինձ:

Վոնց վոր տեսել ելի

ձեզ յերազումս:

Ու վաղուց զգացել եմ յես ե՛լ

ձեր վերջին հուզումը...

Ինչքա՛ն անգամ յես ել,

ձեր վերջին քերմը հակատիս՝

սարսափած կեցել եմ՝

հպած մի պատի:

Յեզ ավիններ ինչքա՛ն

ծակել են կուրծքս, յերբ —

մի յերջանիկ դիպված

փրկություն ե բերել...

Ինչքա՛ն եմ ազատվել հանկարծ,

Ինձ կորած եմ կարծել յերբ յես: —

Ուզո՞ւմ եր ձեզ պատմեմ մի արյունոտ արկած —

մեր պայքարում փորձիկ նա մի ղեպը ե թեպետ...

N քաղաքում եր:

Տասնյեփովքը թվին:

Թշնամին դիմանում եր:

Կովելով՝ մենք քաղաքը տվինք:

Թշնամին տիրել եր

քաղաքի դիրքերին:

Մեր բոլոր ընկերները

ընկան գերի:

Յես յեվ ընկերս —

յերկու արմեյցի

նետեցինք զենքերս՝

զնացինք:

Բոլոր փողոցները,

անկյունից-անկյուն

թշնամին բռնել եր,

կապել եր փողոցները, փոնց վոր հանգույց:

Յես անցա ջանկապատր —

մտա ալգին:

Նկատեց ընկերոջս մի սպիտակ կազակ:

Յեվ ահա մտրակեց իր ձին

յեվ Սերգեյին հասավ:—

— Վորտեղի՞ց ես, — հարցրեց կազակը:—

— Դե ենտեղից, դիրքից...

— Բաս ո՞ր ե հրացանդ:

— Նետեցի...

— Կարմիր արմեյցի՞ յես:

— Այո:

— Այո՞ո՞...

Յեվ մտրակեց իր ձին

յեվ բռնեց՝ Սերգեյի վրայով:

— Յեզի՜շ, Յեզի՜շ — գոռաց

Սերգեյը ներքովից:

Սուրբ բունքին առավ,

անցավ թեվից:

Յերկրորդ հարվածն հետո

զանգը կիսեց:

Յես հեռացա փութով:

վոր չկիսվեմ յես ել...

. . . . .

Յեվ հիմա — եստեղ եմ,

կոմունարներ, ձեզ հետ:

Դավաճա՞ն եմ յեղել —

կասեր:

Բայց զիտե՞ք՝ վարկյան եր մնացել,

վոր կիսվելի յես ել:

Յեվ զիտե՞ք՝ ինձ ել՝ վոնց վոր են

վարկյանին կիսել, հարվածել են.

են վարկյանից՝ զիտե՞ք՝ մինչեվ որս

յես լսում եմ — լսում եմ... Դրա ձենը:

Ի՞նձ եր կանչում.

ինչո՞ւ...

— Յերեխա՞ յեր Սերգեյը. .

Ո, մանուկ եր նա վոնց վոր մի:

Տեսնում եմ սակայն, վոր նա ել

նայում ե հրեն ձեր վորմից!

Վո՞նց ե թռել եստեղ՝

կազակի հարվածը ճակատին,

ու նայում ե եսպես,

ձեզ պես

Պեր-Լաշեզի պատից...

Թող պառկի՝ պառկի՝ թող նա եստեղ,  
 ձեզ հետ,  
 հենց ես պատի ներքո:  
 Միշտ լնույն չե՞ր նկատ կազակի,  
 թե վերսալցու ձեռքով:  
 Ընկերներ:  
 Թող պառկի Սերգեյը ձեր բով:

Եսպես եր, բնկերներ, եղ ղեպրը:  
 Եսպես եր, Պեր-Լաշեզ:  
 Իսկ հետո...  
 Ինչ վոր յեղավ հետո  
 յես վո՞նց ասեմ...

Այգիների միջով  
 յես մտա մի տուն:  
 Փոխեցի շորերս,  
 փողոց յելա:  
 Ու բայցեցի մի՞տո՞ւմ, վոնց վոր կատու.  
 արյունը հոսում եր բաղարում, վոնց վոր սելավ:

Ինձ բոնեցին շուտով:  
 Խուզարկեցին վրես:  
 Բան չգտան վրես՝ ձեռ չտվին:  
 Ինչ վոր յեղավ սակայն — մահից վատ չե՞ր միթե...  
 Ինձ բռնեցին մի տեղ,  
 մի տեղ,  
 ուր կարող եր լինել մահը — կյանքի դեմք:

Մի հարյուր մարդու յետևից  
 ինձ ել խառնած նրանց՝ դաշտը բռին:  
 Ճամբին նայում եյի

շուրջս  
 ուշիմ:

Փողոցներում տեսա —  
 հազար ընկեր:  
 Վորը բունքից զարկած, վորը վզից:  
 Վողջը ծանոթ մարդիկ,  
 ծանոթ դեմքեր:  
 Հիմի դիակ դարձած,  
 ցիրուցան  
 եղելուններ մսի:

Սակայն եղ ել վոչի՞նչ —

Կայարանին մոտիկ  
 կար «Сіу»-ի մի մեծ, հսկայական ոեկլամ:  
 Յուցանակի նման ցցված եր նա ետեղ  
 զույգ սյուների, վոնց վոր զույգ վոտների վրա:  
 Այ, «Сіу»-ի հենց եղ ցուցանակի վրից  
 կախված եյին մերոնք... հինգ բնկերներ մեկտեղ:  
 Ինչ-վոր կիններ, հարբած, շուրջը շրջում եյին,  
 լեզուները հանում ու ծիծաղում լկտի:

Յեվ կայարանն հետո...

Ետեղ, դուան մոտին,  
 կային յերկու լապտեր՝ սովորական, զազի:  
 Չորս բնկերներ եղտեղ մեկտեղ կախված եյին  
 սեվ լեզուներն հանած յեվ վոտքերը գետնից  
 բարձրացրած հազիվ...

Կայարանի մոտից մեզ բռնեցին դաշտը:  
 Յերկաթ բահեր տվին:  
 Յեվ փորեցինք ահա մեր ձեռքերով մի մեծ  
 յեղբայրական շիրիմ:

БИБЛИОТЕКА  
 ИНСТИТУТА  
 ВОСТОКОВЕДЕНИЯ  
 Академии Наук  
 СССР

Յերկու հազար ընկեր մենք դրեցինք եղտեղ,  
լցրինք իրար վրա, վոնց վոր ձկներ մզլած:  
Վորը թե չեր մեռել, կամ վիրավոր եր թե՛  
նրան նետում ելին եղպես՝ մի աչքը բաց:

Հասկանո՞ւմ եր արդյոք, ընկերնե՛ր,  
թե ի՞նչ ապրեց հոգիս եղ գիշերին:  
Թե հարազատ, մոտի՛կ, յեղբայրական ձեռներ  
ինչքա՛ն, ինչքա՛ն անգամ ինձ դրեցին շիրիմ...  
.

Իսկ առավոտ, յերբ յես  
դարձա բազար,  
դրված եր մեյդանում  
մի կախաղան:  
Շուրջը մարդիկ, կանայք—  
հազած կապած—  
յեկեկ ելին վոնց վոր  
զվարթ կարակ:  
Ու տերտերներ ենրմակ,  
վորոնց շրթից  
հոսում եր, վոնց վոր թերմացք,  
ինչ վոր մի յերգ խրթին:

...Յեվ բերեցին ահա, շրջապատած,  
մեր զինկումին՝ տկոր, վոնց վոր ժորութ:  
Նա բայում եր հաստատ, գլուխը բարձր,  
կարմիր դրոշ ուներ վոնց վոր բռնած  
իր կապույտ, իր լուրթ աչքերում:—

Կախաղանի ներքեվը դրված եր մի արկղ:  
Սապոնի յեր՝ վրան գրած «Բողո»:  
Նա բարձրացավ վրեն՝  
բա՛րձր,  
բա՛րձր.

ո, ինձ ենպես թվաց, թե շուրջ կտա հիմա  
յերկրագունդը վոտով:

Նա նայեց եղպես իրա շուրջը՝  
հայացքը վոնց վոր գերանդի:

Ու գլխատեց վոնց վոր նա հայացքով իր եղ—  
թշնամական վաշտեր ու բանակներ անթիվ:

Ուզեց ինձ ե՛լ հանկարծ  
վոնց վոր հնձի:  
Հասկանո՞ւմ եր՝  
նա—

նայում եր—  
ինձ...

Յեվ հանաչե՞ց արդյոք,  
հասկացա՞վ,  
հասկացա՞վ արդյոք, վոր հայացքը  
կախաղան եր՝ դեմս ահագարհուր կեցած,  
Բայց չտեսա ել յես:  
Ել չիմացա:  
Յերբ նայեցի հետո՞ նրա դին  
արդեն կախված եր ցած...  
Ընկերներ!  
Յես վո՞նց չխենթացա...

Եսպես ե ահա, Պեր-Լաշե՛զ:  
Յես փրկեցի կաշիս,  
բայց անողո՞ք յեղա,  
յերբ Կարմիր բանակը կրկին  
մտավ բաղար:  
Ո, յերեք որ չանցած յես ունեյի արդեն

կարմիր ձեռներ...

. . . . .  
. . . . .

Հասկանում եր դուք այս, բնկերներ,  
հասկանում եր արդյոք հիմա թե  
ինչքա՞ն ենք ունեցել մենք ել  
Պեր-Լաշեզի պատեր:  
Ես պատերի տակին յերբ բնկավ  
մեր վերջին բնկերը—  
են որից  
մեր կռիվը անվե՛րջ, անընդհատ ե:  
Մեր պայքարի համբին  
Պեր-Լաշեզի պատեր ինչքա՞ն ենք մենք փորել:  
Բայց ունենք մենք մի պատ, ընկերներ,—  
յեւլ ուրի՛շ ե, ուրի՛շ ե եղ մի պատը...

Մոսկովում ե նա:  
Հյուսիսում:  
Եստեղից հեռո՛ւ յե.  
Ձեզ ծանոթ ե տակաջն նրա համբան:  
Յեւ զիտե՛ պայքարող բանվորը—  
Լոնդոնում նա լինի, թե Ռուրում—  
վոր կոչվում ե նա—  
«Կրեմլյան Պատ»:

Պատկած են ենտեղ բնկերներ,  
վոր պիտի պատկեն ձեզ հետ:  
Նա մի կարմիր, մի նոր  
Պեր-Լաշեզ ե:  
Բայց ուրի՛շ, ուրի՛շ Պեր-Լաշեզ:  
Հաղթանակի մի պատ:  
Նրանո՛վ ենք փառքի մենք հասել,

աշխարհը յերկուսի կիսել.  
նրանո՛վ ենք ետը  
հպարտ:

Մե՛նք ենք փորել եղ պատը հաղթանակից հետո:  
Մեր շարքերի համար—  
նա հաղթական կամար ե:  
Ենտեղից ե անցնում մեր հիմնականը, հու՛նը:  
Պայքարով ենք զրել  
ամեն մի բարն ենտեղ:  
Հաղթանակո՛վ հիմնել  
մեր Կարմիր Պանթեոնը:

Ձեզ գուցե ցնո՞րք ե թվում,  
վոր աշխարհում հիմի  
Կարմիր Պանթեոն՝ կա:  
Յեւ պատկած են ենտեղ բով-բովի  
մեր բոլոր բնկերները  
Մոսկովում  
Հոկտեմբերին բնկած:  
Պատկած են նրանք, վոր բնկան  
առաջին զրոհի՛ն մեր:  
Յերբ առաջին անգամ  
գնդաց  
հաղթանակի հի՛մնը:  
Յեւ առաջին եղ մեր  
մարտիկներից բացի—  
պատկած են ենտեղ բնկերներ,  
վիթխարի, արի բնկերներ,  
վոր պայքարի համար հաղթական  
բառուղիներ բացին:

Սակայն բոլոր եղ մեր շիրիմների կողքին  
կա առաջինը, մեծը.  
եղ բոլորի կողքին— են մեծագո՛ւյնը կա:

Կանգնած ե նա ենտեղ, իբր անհաղթ փառքի  
մի վիթխարի վկա:

Պատկած ե ենտեղ—Իլլիչը... .

Մեր կարմիր ղեկավարը.

լսո՞ւմ եք... .

Եղպիսի ղեկավար—չի՛ր.

եղպիսի ղեկավար—յեղեկ չի՛,

վոչ յերեկ,

վոչ առաջ,

վոչ հնումը!

Իլլիչը—

ուղե՛ղն եր մեր դասի.

մեր դասի հոգի՛ն եր:

Նրա ամեն մասում

հոսում եր մեր դասի արյուներ:

Նրա մկանն ամեն,

ամեն բջիջը մի—

դասակարգի համար յետում եր, պայքարու՛մ եր:

Իլլիչը—

դե վոնց վոր յերկրագունդը:

Այսինքն՝ աշխարհը,

վոր հավաքել ե կյանքը իր ջղերում:

Իլլիչը—

հավաքել եր մեջը—

հիսո՛ւն հազար սերունդ!—

—Բանվորական, իհա՛րկե,—

բանվորական սերունդ!

Դասակարգը

դրել եր նրա մեջ իր քոյոր մեծությունը:

Նա շնորհ,

կամք

յեվ գիտությո՛ւն եր:

Գիտցիպլի՛ն եր Իլլիչը

դասակարգի մի նոր,

վոր ճգտումներ ունի

ընդհանուր:

Վոր փոխելու յե կյանքը

հանուր:

Նրա միտքը—

ովկիան եր լին:

Մոնչոդ Ատլանտի՛կ եր.

ուրի՛շ եր:

Ասում են՝ թե պայթի հյուլեն—

աշխարհնե՛ր կը բանդե նրա ուլժը.

Հյուլեյի տարրը թե հալչի—

մեն մի հատիկ հյուլեն

յերկրներ, լեռներ կը հալե.—

Եղպես,

հոսում եր ուղեղն Իլլիչի—

տարրալուծված հյուլե:

Յեվ գիտե՛ր, գիտե՛ր Իլլիչը

բազմություններ կուլ:

Գիտեր կամքեր հազար

իրար բերել:

Կառներ կամքը ոսի,

կամ գերման, կամ չին բանվորի—

Հագոյի կամքին կը կապեր:—

Եսպե՛ս կուեց բոտնցքը

բանվորական դասի

յեվ դրեց անունը—

P. K. II.

Հարկավոր եր ամբողջ մի դասի  
ինչքան բրտինք ու ջանք,  
վոր ծնվեր հանճար մի հնպիսի,  
ինչպիսին եր ինքը...

Գիտե՛ր, գիտե՛ր Իլլիը բազմություններ կուել...

Բայց կամա՛ց, կամա՛ց, ընկերներ!

Մոտենում ե վոստիկանք:

Գալիս ե:

Ստիպված եմ կտրել աղամա

ես կարմիր հուշերս:—

Թողեր յերթամ հիմա:

Կգամ—գիշերը:

## II.—ՆԵՐՔԵՎՈՒՄ ՔԱՂԱՔԸ

## ՆԵՐՔԵՎՈՒՄ ՔԱՂԱՔԸ

Գիշեր:

Մշուշ:

Փարիզ:

Յեղեկով մշուշից,

հրեն,

բարձրանում ե դեմս նորից

Պեր-Լաշեզը—

Մյուս դե Զեդերն:

Ու նորից հենվել եմ պատին,

կեցել եմ՝

վիթխարի թախիծը հակառակ:

Յետեվից—

պատից—

բարերը փափսում են, խոսում են:

Կամաց,

հատիկ—հատիկ,

կաթկթում են բառերը:

Լռել եմ:

Լսում եմ:

Ներքևում հեվում ե բաղաբը:

Բարձրացած առկայծող խավարից՝

Ներքեվում հեվում ե վիթխարի  
Փարիզը:

Կարմիր լամպերը յերիզել՝  
պսակներ են կապել ճակատին:  
Առկայծում ե Շան զելիզեն,  
պսպղում ե Կոնկորդը վիթխարի:  
Մեջտեղում ցցվել ե Եյֆելը,  
ու շուրջը,  
չրջագծում լուսե—  
վիտրիններն ահա, կափենները  
դառնում են, վոնց վոր կարուսեր:

Ներքեվում,  
յետեվ-յետեվից,  
թռչում են թեթեվ ավտոները:  
Փողոցներն իրար շաղախել՝  
ավտոները դռում են:  
Նողովակներ վոնց վոր ջերմաչափի՝  
փողոցները յետում են  
ավտոների տապից:

Իսկ ներքեվից, գետինը բերելով,  
փորելով գետինը—  
սողում են մետրոները, գալարվում են:  
Աղիքներն են դրանք բաղարի.  
ամբոխները ստուել են բկին.  
պղտորել ե արյունը:  
Կատաղել ե մետրոն տենդից,  
չմարսելուց դեղենը—  
ու թքում ե ետեղ ու ենտեղ  
մարդկային հսկա հեղեղներ:  
Թափում ե խորխոր դուրս  
Բելվիլում, մոտերքն Եյֆելի,—  
ամբոխներ ե հորդում,  
վոր կլանե ելի:

Յեվ լամպերի լույսում  
բոլորովին հանված՝  
անվախ՝  
լողանում են դրսում  
ոթորուս ու տրամվա:  
Պոռնիկներ են վոնց վոր հոլանի,  
գալարվում են կրքից մերծիման.  
փախել են վոնց վոր հենց հիմա  
Շաբանեյի տնից:  
Գալարվում են մի լարուն տենդից,  
խմել են աբսենտ ու ջին—  
մութ անկյուն են փնտրում, վոր ենտեղ  
հանձնվեն  
առաջինին:—

Ներքեվում առկայծող լույսերից  
հորիզոնը կարմիր ե:  
Յերկիրը վոնց վոր ալ մշուշ ե:  
Ձեն յերեվում թեկուզ,  
բայց տեսնում եմ յես մի առ մի՝  
Ուկրա՛ն,  
Ֆրանսական Կոմեդին,  
Մուլեն Ռուժը:

Եղ նրա՛նք են վառել մշուշում  
ելիքտրական լույսի ովկիաններ հրեղեն:  
Վառել են,  
հսկում են ուշիմ,  
վոր բուրժույր ճամփան չջղե:  
Լույսեր ոռանմ ու շեկ,  
լույսեր դեղին,  
գալարվում են շամբշոտ մշուշում,  
վոնց վոր ոճեր հրեղեն:  
Ողում թարթում են, կախարդում,  
վոր անցորդն անսխալ կարդա,

Թե ինչու, ինչու և հարուստ  
գիշերվա  
Մոնմարտը:

Բայց ինչու՞ կարդայ «Մուլեն-Ռուժ» —  
յեւ ինչու՞ մտնել կազինո,  
յերբ բոլոր փողոցներդ,  
ո վիթխարի Փարիզ,  
վիտրիններ են սիրո:

Փողոցներում եղ լույս,  
մինչեւ առավոտ  
վիտում են պոռնիկները  
գինով:  
Թաքուններով ենտեղ  
թափառում են, կանչում —  
ե՛գ ձիերի նման, փողոցների տենդում  
վրնջում:

Ու պարում վիթխարի՝ եղ,  
իր հարպոտ մոտ թր տնկած ողում՝  
հոտոտում և բուրժույր:  
Փնտրում և միս կնոջ:  
Վռչի՛նչ, վոր ինքը վորձ և փտած:  
Ո, բուրժույր բարի՛ յե.  
Թե չտվեց ձեզ սու —  
հո սիֆիլիս կտա՞:

Մյուզիկ-հոլլ:  
Բալ-կարարե:  
Վարյետե:  
Սինեմա:  
Թատրոն:

հարելի յե հղփանալ,  
պարեր:  
Իսկ հետո —  
վորկորում իր տոթ —  
ձեզ կրտանի մետրոն:

Մետրոն բարի՛ յե:  
Յերեսունհինգ սանտիմ —  
յեւ կը նետե մետրոն ձեր բամաժ մարմինները  
եղ լուսավոր, շողուն շրջագծից անդին:

Եղ լուսավոր, շողուն շրջագծից անդին  
բանվորական թաղերը  
խավարում  
վորոհում են սու ու սանտիմ:

Ելեկտրական լույսի փոխարեն  
զազե լամպերն ենտեղ  
նպոռա աչքերը խրել՝  
անտղում են խավարը:  
— Եղ խավարի՛ն տարեր  
ձեր բամաժ մարմինները.  
Փարիզում եղ խավարը միայն  
անվերապան կերպով ձեզ համար ե:

Դե Փարիզը կենտրոն՝ն ե,  
առա՛նցքն և աշխարհի:  
Ի՞նչ կլինե՞ր աշխարհը,  
թե չքանար Փարիզը  
բաղաբների շարքից!՝  
Թե վոր միս ե՛լ չտան —  
եղ ինչու՞ յեն շնչում զավառները.  
բանվորական թաղերն ել ինչու՞ յեն! —  
Ո, չգիտե՞ք միթե՛

Փարիզում մեռնելը—  
հաճույք ե, յերկնային մի չու յե!!

Ու մեռնում են:

Մեռնում են խմբերով:

Տեղերը բռնում են—

մերոնք:

Դեպի շուկան սիրո

տոններով զրկում են հղկած միս:

— Թե չլինեն մերոնք—

բուրժույր ո՞ւմ բամի...

Գիշեր ե:

Մյուր Ֆեդերե:

Նստել եմ՝ հենված մի քարի:

Ներքեվում հեվում ե վիթխարի Փարիզը:

Ո, վիթխարի՜ Փարիզ!

Ենտեղ Փարիզը

յեվում ե յեռանդ ու արկած:

Տազնապից դղրդում ե յերկիրը:

— Թագավոր ե ենտեղ — Առարկան,  
դիկտատոր ե —

Ի՞րոք:

Ամբոխների մեջքին

նստել, վոնց վոր վիշապ՝

բշում ե, ուր վոր կուգե:

Մարդը — անհայտ ե լուր,

մի զանելի նշան. —

X.

Y.

Z.

Գրում ու ջնջում ե Մերենան,

փոխում ե հարցանիշը:

Հոնդում ե.

պահանջում ե յեռանդ ու արկած,

վոր բազմանա, աճի առարկան,

մարդու ձեռքով սարքած

եղ փետիշը:

Յեվ առարկան աճում, բազմանում ե:

Յեվ աճումը նրա — աննվազ ե:

Յեվ ահա — անթիվ ե իրը,

վոնց վոր բանակը աստղերի

յեվ ծովերի ավազը:

Յեվ եղպես —

յերբ աճում են իրերը —

բարձրացնում են բունտ:

Լցնում են խանութները,

շուկաներն հորդում:

Ենթա՛ն են աճում մի տարում,

վոր բոլո՛ր շուկաները նվաճում են:

Բայց ընչի՞ն, ընչի՞ն ե իրի

եղ անտեղի աճումը! . . .

Բարձրանում ե խուճապ:

Ամբարներից իրենց, դարակներից

իրերն հորդում են դուրս:

Կոծոտում են շղթան գների,

թափվում են փողոցները՝

խռիվ

հորդու-հորդու:

Վազում են կոշիկները,

ուզում են հազվել վոտքերի:

Ել չեն ուզում լինեն  
 վիտրիններին գերի:  
 Մուրհերը ծեծել են ուզում,  
 մեքենաներն հնծել  
 չեմ չմնալ իզուր,  
 վոր ժանգը հանկերով իրենց հոգին խանձն:

Յեմ ես բոլորը—յե՞րբ:  
 Յերբ բորիկ են բյուրերը:  
 Տկոթ են յերբ ու մերկ  
 բազմություններն իրենք,  
 վոր կուել են, կուիել եղ իրերը:  
 Յերբ բյուրերի փորերը  
 կշտացած հո չի՞.  
 յերբ ուտում են նրանց  
 կեղտ ու վոջիլ՝

Ահուկի՛ յե սակայն, Պեր-Էաշե՛զ,  
 յերբ բունտ ե իրերի:  
 Յերբ մարդը հորտ ե լոկ՝  
 իրին գերի:  
 Յերբ բողոքում ե իրը՝  
 սպառավելու տենդով  
 ցնցելով յերկիրը  
 Հնդկաստանից Լոնդոն:  
 Յերբ ծախսելու խանդոտ յեռանդով  
 ապստամբեց իրը, վոր աշխարհում բազմի—  
 վերջացավ՝—  
 Բյուրե՛րն ել գան թող  
 սպառերազմի՛..

Եսպես մի որ—  
 յերեկ—  
 Զիկագոյից մինչեմ Ստամբուլ—

Իերկրներում բոլոր  
 իրն ապստամբեց:  
 Բարձրացավ Լոնդոնում, Ռուրում,  
 Փարիզից բշեց մինչեմ Զին  
 չեմ հանեց թնդանով ու ումբ  
 չեմ դարձրեց մարդուն  
 վոնց վոր հարթը՝  
 չնչին:

Հասկանում եք՝ վորպեսզի չարչին  
 նոր ճամփաներ հարթի ապստամբած իրին,  
 վորպեսզի իրը չփախչի  
 իր հարպոտած ձեռից—  
 մարդկային կյանքը վողջ հանձնեց հրի:

Յեմ շեներից ահա, քաղաքներից,  
 Հիմալայից մինչեմ Նիազար,  
 բանվորական խմբեր  
 ու թաքուններ գերի  
 լցվեցին դիրքերը:  
 Գաղութներից բշած,  
 գավառներից՝  
 բերեցին բռնի՝  
 թափեցին դիրքերը:

Տերբ,  
 նստած մեջտեղում,  
 իր լիության թասի  
 վոսկիները դեղին  
 թափում եր հորդահոս  
 բանվորական դասի  
 դահիճների ունիւն:  
 Դեմքին դիմակ առած,  
 հազած խոսքեր ստի՝  
 բանվորական զնդերը

նրանք  
կապեցին թնդանոթի:

Կարելի չեր եստեղ դեռ անթիվ  
ածականներ շարել:  
Ընկերներ,  
չգիտե՞ք միթե,  
թե դրանք ովքե՞ր են:—

Վարպետներ են դրանք հանճարեղ,  
վոր գիտեն նստուկներ բորել  
յեւ կոպեկներ քերել:—

Նրանք խոսքեր ունեն  
առածիզ,  
վոնց վոր ուեղին:  
Խիղի՜ր նրանց նղմիւմ,  
վոնց վոր չղջիկ,  
աշխատում ե գիշերը:  
Նրանք կարող եյին  
անկյունից խփել ժողոտսին,  
վոր վնգստան հետո բանվորական դասին  
խոսատումներն իրենց  
զազիր  
յեւ քոռ գոռ չարժող իրենց «սերը»:

Եղպես պոռնիկը  
կարմիր ե բսում յերեսին,  
վոր հմայե մարդու:  
Եղպես հեաժախար  
յերբեմն  
գործածում ե արթուկ:  
Ասում են նրանք «Հայրենիք»,  
«Մշակույթ» են ասում:

խո՞ւմ եք:  
Եղպես նյամ-նյամը վայրենի  
ողեր ե շարում իր քթին,  
վոր ծածկե իր բոսոտ մերկությունը!  
Եղպես «լուսավոր» ջինգոիստը,  
վորպեսզի վզերին նստի  
յեւ խմի քրտինքը հլու  
դեպի վայրերը վայրենի  
տանում ե գույնզգույն բուստեր  
ու կոպեկնոց հուլունք:

Են ծայնր,  
վոր պիտի կատաղի մոնչար  
պիտի թքեր աշխարհը մորթողների ուխին՝  
գնդակով լսեց՝ չհնչած:  
Գնդակով հպած մի պատի՝  
ընկավ դեկավարը  
դավաղիր  
դահիճների ձեռից:

Բայց են ծայնր —  
ծայն չե՞ր հո անհատի.  
անհատի ցանկություն հո չե՞ր:  
Դեռ մի տարի չանցած՝ նա դղրդա՜ր պիտի,  
բանվորական շարքերը  
գրոհների կոչեր:

Են ծայնր,  
չանցած մի տարի —  
պիտի հնչեր եստեղ Կինտալից,  
Յիմմերվալդում հետո նա դառնալով վորոշ՝  
պիտի պարզեր կարմիր գրոհների դրոշ:

Կարելի՞ չեր արդյոք են ծայնր  
խեղդել հեղեղ դարձած արյան մուժում:

են ձայնը—

շուտո՛վ,

շուտո՛վ

շուտո՛վ

պիտի բողո՛ք դառնար

յեւ անողոք՝

բանականների բոռուն սիրտը խուժեր:

Տարածվելով եղպես, ծավալվելով անշնդ,

լեռնանալով կարմիր են ծովերում արյան—

պիտի հնչեր հետո, պիտի կանչեր՝

— Յեւի՛ք, պրոլետարիատ...»

Խանգարեցին թեկուզ նրան մարդիկ կուզիկ,

համոզել ձգտեցին թեկուզ,

վոր դասակարգը մեր

իր իրավունքը

մուրացկանի նման՝ տիրողների՛ց ուզի.

կիսեցին թեկուզ յերկուսի

բանվորական բանակը

սակայն կրկին՝

յերբ ժամանակն յեկավ՝ իջավ բուռնցքը մեր

տիրողների բկին:

Տիրողներին ծախած

իրենց հոգին՝

նրանք ձգտում եյին

մեզ կապել թուկի:

Յերբ բազմանում եր, ահում եր

որեցոր մեր թիվը՝

նրանք ձգտում եյին

ընտանի շնիկ դարձնել

մեր ծավալուն կոխվր:

Սարբել եյին իրենք

թեկուզ «Միություն» մի,

սակայն—

բավական եր մի ումք, վոր ցրեր

եղ «Միությունը»!

Նրանք բացել եյին եղ «Միությունը»,

վոր ով ել դիմի—

ծախեն նրան փթով

թնդանոթի միս:

Յեւ ծախեցին ձրի:

Սակայն մինչեւ եղ՝

յերկաթե ձայնը Լենինի

բանականներում հնչեց:

Կանչեց ձայնը նրա

բանակից — բանակ,

տիրողների վրով

յերկարել ձեռքերը

յեւ յեղբայրանալ:

Կանչեց ցնցել դիրքերը

տիրողների զահի—

յեւ պայքարի յեյնել

դասակարգային՝

Յեւ մերոնք յելա՛ն:

Դարձրին սվինները

տիրողների վրա՝

Սակայն նրանք

փորձեցին կրկին՝ մեր կոխվր

դարձնել ազգային ջազբանդ...

Ներքեւում Փարիզը

հեվում ե շնչառագառ:

Ցնցեցին աշխարհը թեկուզ

հոկտեմբերյան թինդերը—

սակայն նա դեռ

տենդագին սարսափը հոգում

համառում ե՛ շնթռկած ենտեղ:  
 Սվինների թռկով յերկաթել  
 քանվորական զնդերը՝  
 կուտակել տանկեր ու հանքեր  
 յնվ կարծում ե՛  
 տեր ե:

Իրը  
 կրկին ենտեղ  
 պահանջում ե գրգիռ ու արկած.  
 բրտինք ե ուզում՝ լցնի փորը:  
 Մերծիման,  
 կիսամեռ ընկած  
 եղ գերի-դիկտատորը!

Կարծում են՝ մեղմեցին նրա բունտը!..  
 Նրա կողք  
 խրելով թնդանով ու դանակ՝  
 բաշեցին արյունը  
 ու դրեցին բինտեր,  
 փոր հանգստանա:

Սակայն տենդից հետո  
 քաղցած, փոնց փոր զազան՝  
 մոլտում ե՛ շնթռկած ենտեղ նա:  
 Խժռում ե խոժոռ մոռթով  
 քաղմություններ քաղում—  
 ու արյուն ե հագում՝  
 տենդից դեղնած:

Յերախով յերկաթե՛ իր  
 լափել ե ուզում անհագուրդ—  
 հանք,  
 բրտինք,  
 փոսկի ու վարսակ:—

Բայց տազնապով խժռած  
 յունաքանչյուր կաթիլը  
 հոխողով հորդում ե դուրս՝  
 դեռ չժարսած:

Հոնդում ե,  
 թնդում ե ջղածիզ,  
 տազնապից դորդում ե յերկիրը:  
 Չգիտե՛ն խեղճերը,  
 փոր լծկան անասուն հո չի՞  
 աշխարհի դիկտատորը—  
 տերը!

Իհարկե, կարող են նրանք  
 հողը  
 մի տազնապով վերջին  
 դարձնել կրկի՛ն արյան ծով:—  
 Բայց չի՞ հաջողվի նրանց հո  
 դարձնել իրը—չնիկ,  
 ու մոռթը ցանցել  
 հնի  
 եւն ժանգոտած ցանցով:

Ես անգամ ել յեղավ  
 թե բունա իրերի՝  
 մենք գիտենք՝  
 լինելու յե  
 թիմիական կռիվ:

Լսո՞ւմ եք, ընկերներ!  
 Յերկ  
 պատերազմ եր գազի:  
 Բայց են  
 ինչ լինելու յե վաղը—  
 գազը նրա կողքին  
 հազ ե հազիվ:

Ճառագայթներ ունեն  
 նրանք հիմա,  
 վոր տարածում են  
 յերաշտ ու մահ:  
 Հիմի սումբեր ունեն,  
 վոր պայթելուց բացի —  
 կարող են տարածել  
 սիֆիլիսի բացիլ:  
 Կարող են տարածել տենդ:  
 Տիֆ:

Ժանտախտ:  
 Մի ժամում կարող են  
 յերկրագունդը,  
 հո՛ղը վողոգել  
 դիակներով անթաղ:

Իհա՛րկե, կարո՛ղ են:  
 Յեւ կըփորձեն անել:  
 Յեւ կանեյին հիմի —  
 թե թողնեյին կրկին  
 դարձնել մեր դիւերը  
 թնդանոթի միս:

Մեր միտք,  
 մեր դիւերն անգամ  
 նրաք վաղուց հիմի կլինեյին մարտած —  
 թե չըջեր ներքեւը  
 մեր կարմիր Ուրվականը,  
 վոր կոչում են նրանք —  
 «Կոմունիզմի Սարսափ»!

Թե վոր լիներ մեր վիզը  
 նրանց առջեւ կրած. —  
 թե չիմանար Փարիզը,  
 վոր եզուց կզանք!...

### III. — ՄԵՆՔ ԴԵՌ ԿԳԱՆՔ

## ՄԵՆՔ ԴԵՌ ԿԳԱՆՔ

Ահբ

զրկել ե նրանից հիմի զե:  
Աշխարհին տիրողը  
ինչի յել ուզում ե զիմի—  
կարող ե դարձնել ել միթե  
բանվորական զնդերը  
թնդանովի միս:—

Տեսնում եմ՝

ներքելում հիմի,

զե՛մս

զե՛մս,

ենտեղ—

փողոցների յնում,

շառաչում—

լսում եք՝

բառաչում ե սարսափը...

Հիտուն,

բանվորական թաղերը խավարում—

լսում եք.

փսփում են.

խոսում են:—

Վոնց վոր վրեժ մի ալ՝

հոսում ե ենտեղից սարսափը

զեպի ետուալ:

Սարսափը  
սահում է հատեղից, ձեր բովից,  
փչում է Մոսկովից, վոնց վոր հողմ:  
Վոնց վոր միրաժ մահու՝  
հոնդում է սարսափը ու սահում  
տիրողների չորս կողմը . . .

Հողմը,  
ձեր հողմը,  
Հոկտեմբերի հողմը  
դարձել է հիմի ուրազան:  
Նիազարից մինչև Արագած  
հոնդում է հիմի յերկրագունդը:  
Պատուելով լուսնի ցեղերը՝  
հողմն՝ էն հասցրել արդեն  
մի առավոտ  
հատեղ  
ձեր ցանած ծիլերը:

Յեվրոպայում արդեն Կոմունիզմի Ուրուն  
մարմին է ստացել ու միս:  
Շրջում է Լոնդոնում, Ռուրում,  
Բալկաններում հիմի:  
Յեղնում հրեն Բերլինից,  
Կարմիր բանակ դարձած՝  
տիրողների հոգում տարածում է հիմի  
անպատմելի սարսափ. . .

Յերկիրը,  
ափե-ափ,  
լցված է մեր տապով:  
Մի վիթխարի թափով՝  
լսում եմ՝  
շուրջս ահա

հոնդում են լուրերը:  
Մինգապուրից — Փարիզ!  
Վաշինգտոնից — Լոնդոն!  
Տենդով,  
թինդով,  
շոինդով  
հոնդում են լուրերը:  
Թիկունքս հենած ես քարին՝  
լսել եմ:  
Լարել եմ ականջս:  
Լսում եմ աշխարհի  
ոաղիտ-կանչը:

Յելնելով դեմից, ելիելից —  
տարածվում են լուրերը:  
Լուրերը,  
վոնց վոր հողմ,  
տարածվում են աշխարհի չորս կողմը:  
Մշուշում  
թպրտում է ողբ հողմանման տապից.  
դժժում է.  
— Ժու-ժժո՛ւո՛ւ, ժու-ժժո՛ւո՛ւո՛ւ, ժու-ժժո՛ւո՛ւո՛ւ...  
— Շտապե՛ք, շտապե՛ք, շտապե՛ք. . .  
Հնդկաստանից Տիբեթ —  
ու յիտ՝  
դեպի Փարիզ, Լոնդոն,  
դեպի Բերլին. . .  
Թնդում է ողբ լուրերի  
տենդից:

Ու յիս,  
կեցած հատեղ՝  
լարել եմ, սրել ականջս:  
Շուրջս  
բռնում է

ռադիո-կանչը:  
Ականջս նրա թնդյունին —  
լսում եմ:

Խոսում են Լոնդոնից: —

« — Լսե՛ք, լսե՛ք, լսե՛ք!

Խոսում ե —

Ֆորբեյն Ուիլսի

Ռադիո Բյուրոն!

X.

Z.

Ձերո՛!

Մոտենում ե մարդկության հինալը՝

Մոսկովից արշավում ե —

Յերրորդ Ինտերնացիոնալը՝

Ամենաթարմ լուրեր՝

Մոսկովի դիմակը բացված ե հենց հիմա՝

Կոմիտեներն ըլուրո՛!

Ձինովյեվի նամակ՝

Մոսկովից հրահրում են բանդել Ֆորբեյն-Ուիլսը՝

Լսե՛ք, լսե՛ք, լսե՛ք! . . . »

Հոնդում ե մյուսը.

խառնվում ե Լոնդոնի ձենին,

վոնց վոր նարաթ լինի: —

Լսում եմ:

Խոսում են Բերլինից: —

« — Ա-յի՛ի՛ի՛ . . .

Գտա՛նք, գտա՛նք, գտա՛նք . . .

Ջարհուրելի սարսափ՝

Կարմիր վտանգ՝

Յերրորդ Ինտերնացիոնալը մերկացած՝

Վո՛չ մի կասկած չկա՝

Գերմանական Չեկա՝

Գե՛ր-մա՛-նա՛-կա՛ն-չե՛կա՛ա՛ա՛ . . . »

Ականջս

գերմանական ես կանչը .

ինչքա՛ն պիտի տանջեր

չգիտեմ դեռ երի —

սակայն հանկարծ . . .

Ճանկաթում են ահա ականջս.

խոսում են Ռեվելից: —

« — Ռոոոոյի՛

ռռռռռռռռի՛ի՛ի՛ . . .

ոոոոոյի՛ի՛ի՛ . . . » —

Ուրիշ վոչինչ:

Խոսում են:

Բոռում ե ողը:

Յերեվում ե՛ լսողդում են. . .

ո՞ւմ . . .

ո՞վ . . .

ընչի՞ . . .

Կրկին լսում եմ:

Մի ահուելի արիք դիպչում ե ականջիս:

Կծկում եմ ջղերս ու լարում:

Խոսում ե — Սոֆի՛ան: —

« — Ահո ելի պայթյուն տանարում՝

Հազարավոր դիակ՝

Թագավորը դիպվածով ազատված!  
 Սարքել և — Կոմիտաներն ի բուրժուական հատվածը!  
 Միակ միջոցը սրա դեմ — հակառակ և ընդհանուր!  
 Հինդենբուրգ . . .  
 Յուզ . . .  
 Չեմբերլին . . .  
 Վաշինգտոնից Դանուբի! . . .» —

Բթանում և ականջս  
 Թաղանթը թնդում:  
 Հոնդում և արդեն ուղիտ-կանչը:  
 Ինձ ենպես և արդեն թվում թե —  
 պայծում եմ՝ թնդանոթում նստած:

Ականջիս թնդում են . —  
 « — Հնդկաստանում բուհտեր!  
 Մարտիկոն ապստամբ!  
 Ընդհանուր ցույց!  
 Գործադուլ!  
 Տեոոր! . . . » —

Հանկարծ լուռ և վողջը,  
 վոնց վոր սրբեն ձեռով:

Հետո —  
 լցվում և ողբ  
 մի նոր յեռով:

Թնդում և կրկին ականջիս  
 մի ահռելի հոխոյ:  
 Լցնում և աշխարհի լայները:  
 Հետո —  
 խտանում են ձայները,  
 բռնում են բով-բովի . . .

Ականջս հանաչում և կանչը.

Խոսում են Մոսկովից: —

Թնդում և սիրտս,  
 լցվում և ցնծուն կրակով: —

« — Բոլորի՛ն, բոլորի՛ն, բոլորի՛ն!  
 — Լենինյան նոր զորակոչ!  
 — Մտել են Եռկապե քառորդ միլիոն բանվոր!  
 — 5000000 պիոներ!  
 — Բան —  
 — զյուզ —  
 — զին —  
 — կոմ —  
 — Թղթակից!  
 — Բանվոր Չագինը  
 — հնարել և հնձի մեքենա!  
 — Կոմսոմոլը մանում և Կարմիր բանակ! . . . »

Բարձր,  
 բարձր,  
 անահ  
 հոնդում են լուրերը:  
 Թնդում են ականջիս դեռ ելի:

Խոսում և — Յերրորդ Ինտերնացիոնալը: —

« — Կոմունիստական ցույց Ռեվելում.  
 — Սիպտակ տեոորը!  
 — Հեղափոխությունը ենշված և Անտանաի  
 — ղահիճների ձեռով!  
 — Սպանվածների անթիվ . . .  
 — Անթիվ ( . . . բացեր )  
 — Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք . . . »

Կանչում ե—Յերրորդ Ինտերնացիոնալը:  
 Կոմունարներ,  
 լսո՞ւմ եք:  
 Կանչում ե՝  
 զան,  
 ազատեն,  
 չեմ բերեն—Կարմիր Հատուցումը:  
 Կանչում ե վերջին պաշարի,  
 վերջին զրոհի՝ մի:  
 Ընկերներ,  
 խախտել ե արդեն  
 տիրողների հիմք!

Նրանք,  
 իհա՛րկե,  
 կարող են զարկել Մինկովին,  
 Ռեվելի կռիվը  
 կարող են արնախեղդ անել:  
 — Սակայն չե՞ն կարող նրանք հո  
 Լենինյան բանակն սպանել:

Կարելի՞ չե սաստել ուրազանք,  
 կամ լեռնացող ալիքը:

— Կոմսոմոլը:  
 — Հոսող Ժամանակը!  
 — Եղ կենդանի գալիքը!

— Կոմսոմոլը . . .  
 — Այսինքն նրա՛նք  
 վորոնց հանդեպ չեա ինքս,  
 պոետս,  
 հնադարյան մամո՛նտ եմ թերեւէ,  
 միջնադարյան տեսիլ!  
 — Նրանք,  
 վոր բացել են աչքերը  
 Հոկտեմբեր են տեսել . . .

Հասնում են,  
 ուռճանում են նրանք,  
 հասակ են բաշում, վոնց վոր անտառ:  
 Աշխարհը բովանդակ  
 զգրդում ե նրանց արշավից:  
 Անթիվ,  
 անթիվ,  
 անթիվ,  
 անում են,  
 բազմանում են նրանք  
 յեղնում են Ռուրից,  
 Վարշավից . . .

Վարկյանը  
 լարուն ե հիմի, վոնց յերկունք:  
 Գալարվում ե աշխարհը,  
 պիտի ծնի՜:  
 Դեմ առ դե՛մ—  
 բանակներ յերկու:  
 Պայքար ե գալիքի  
 յեմ համառող հնի:

Հինը  
 հեվում ե հրեն ներքեվում:  
 Տագնապից գաղարվում ե:  
 Նվում ե:  
 Հավարում ե ուժերը  
 կուտակում  
 խեղդել ե կամենում բնում—  
 լեռնացող ընդհարումը:

Սարսափից դեղնել ե  
 յերեսի կաշին:  
 Ռանգը թափել:  
 Չո ել ե աչքերը,

հառել հյուսիս:

Ջառանցում ե նոր Ռուր,

Պեր-Լաշեզ:

Դիյե-ր

դիյե-ր,

դիյե-ր,

եշելոններ մսի:

Կարծում ե գալիքը,

անխուսափելին

գալու յն հյուսիսից:

Իհա՛րկե, ենտե՛ղ ե

գլխավոր մեր բերդը:

Մեր գլխավոր ամրոցը—իհա՛րկե, հյուսիսում ե:

Կր դիմանա՞ր սակայն մինչեւ որս մեր բերդը,

թե չլիներ կյանքում

Հնդկաչինից Ջանգու

մեր կենդանի հոսումը:

Թե չլիներ մեր շունչը Փարիզում,

չլիներ Լոնդոնում կամ:

Յերկրագնդի յեթե

յուրաքանչյուր մասում

չբազմանար, չաներ

Հոկտեմբերի հունար:

Յուրաքանչյուր ընչում թե չչաչեր

մեր պայքարի շոինդր հունդուն—

հիմի հո չե՞ր Փարիզը գալարվի ներքեվը

հոգեվարրի տենդում . . .

Դե իհա՛րկե—ենտեղ ե

գլխավոր մեր բերդը,

բայց եղ բերդից բացի—

կա մի ուրիշ բերդ ել,

մի բերդ ել,

վոր կոչում են նրանք—

«Կոմունիզմի բացիլ»:

Յեւ եղ բերդից բացի ել

կան դեռ բազում բերդեր—

ով խելացի չե՛ բաց են

նրա դեմ եղ բերդերը . . .

Մեզ հետ ե

հասկանո՞ւմ եք՝ ինքը—

աշխարհի զիկաւատորը,

տերը!

Մեզ հետ ե

Ի՛րք . . .

Մեր հիմնական ընկերը!

Յեւ գոցե—

մեր մեծագույն, մեր մեծ,

գերագույն դաշնակիցը! . . .

Մեզ հետ ե առարկա՛ն:

Այն—

Աշխարհի մեծագույն ապստամբը:

Յեւիւով զրգիւ ու արկած՝

կարծում են նրան կթամբե՛ն,

կամ կսանձե՛ն . . .

Քրտինք ե պահանջում առարկան

յեւ ընդհանուր լարում,

յեւ վո՛չ թե մասնավոր կամ սեփական ձե՛!

Մեզ ետե վերջապես ինդուստրիան

յեւ մեքենան—մեզ հետ ե:

Մեզ հետ ե ելփելյան աշտարակը!

Մեզ հետ են ե նրանք, վորոնք

ո վոչ թե ուտում են ուտից—  
այլ ուղեղը, միտքը վորոնց  
հանճարեղ ե, թուիչք ե— ու արնոց ե!

Մեզ հետ են եյնշտեյնը, Շտայնախը  
յեզ ծերուկ եղիտունը.  
յսժամ եր...

Մեզ հետ ե թուչո՛ղ ժամանակը  
յեզ պատմության հոսումը!

Ապագայի շենքին ով դնում ե մի բար  
կամ մի կաթիլ՝ անգամ—  
նա մեր մե՛ջ ե, մեզ հե՛տ ե—  
իր կամքից անկախ...

Յես ի՛նչ եմ.

— չնչին մի հյուրն է:

Բայց թիկունքիս ունեմ—

կազմակերպված բյուրեր:

Լեց՞ուն ե սիրտս

եղ վիթխարի բախտով:—

Անա՛ թե ինչու, բնկերներ,

ծեր բարերին նստած՝

մեր գալիքին վստահ՝

նայում եմ Փարիզին, վոնց վոր հաղթող...

Թեկուզ գիտեմ, վոր դե՛մն ե

մեր գլխավոր կոիվր,

թեկուզ գիտեմ, վոր դե՛մն ե

բայց գիտեմ, գիտեմ յես,

վոր հաղթանակը— մե՛րն ե:

Գիտեմ,

վոր ունենք մեր ղեմը—

բանի՜ Հոկտեմբեր դեռ...

ինչքան դիրքեր դեռ կան,

ինչքան բերդեր...

Գիտեմ, վոր լարել են մեր դեմ

իրենց բոլոր ուժերը,

պոլպատել են դիրքերը,

յերկաթե՛լ,—

բայց գիտեմ, գիտեմ յես,

վոր հաղթանակը մերն ե,

հաղթական գալիքը— յերբ ել գա թե...

Նա դիկտատո՛ր ե, տե՛ր ե,

նրան ել վախ չկա,

ում աչքերում վառվել ե

ապագայի մի կայծ:

Ով տեսել ե գալիքը

ավելի մոտից,

բան կոշկակարը տեսնում ե

կոշիկն իր վտտի:

Ով վո՛չ թե տեսնում ե ապագան,

այլ շոշափում ե.

ով իր ամեն նյարդով

յեզ մագերով անգամ

զգում ե անդադար— գալիքների հպումը...

. . . . .  
. . . . .

Եստե՛ղ ե:

«Մյուր ֆեդերն»:

Եսպե՛ս ե կոչվում եստեղ նա:

Բարձրացել ե դեմս հրեն:

Փլատակ ե:

Պատ ե դեղնած:—

Մնացորդն ե առաջվա պատի:

Մի փոքրիկ կտորը:

Վոնց վոր եր՝  
մնացել ե են որից եղպես:  
Վրեն՝  
հատիկ-հատիկ՝  
զնդակների հետքեր:

Քչեցին հորդու-հորդու  
և բերեցին հստեղ:  
Ի՞նչ.  
Թաղեցին ձեզ թե՛  
կարծում են՝ խեղդեցի՞ն ապագան:  
Ընկերներ,  
ընկաբ թե վոր դուք—  
բայց—  
լսո՞ւմ եք—  
մենք կանք!  
Դեռ կգանք!...

Լցված ե կյանքը հիմա  
մեր արշավի թինդով:  
Մեր հեղինակով լեցուն ե—  
Շուտով,  
շուտով կգանք:  
Կրեթենք Կարմիր Հատուցումը!

Արդեն ապել ենք մենք  
աշխարհի վեցերորդը:  
Յեվ կան,  
յեվ կան թեկուզ,  
դեռ կան բազում բերդեր—  
սկսվել ե սակայն հաղթանակի յերթը:  
Շուտով,  
շուտով,  
շուտով

Փարիզի մեծ ե հերթը,  
ընկերներ!...

Ներբեվում հրեն  
բանվորական թաղերը խավարում—  
լսում եք.  
վախում են.  
խոսում են...  
Վոնց վոր վրեժ մի ալ՝  
հոսում ե հնտեղից սարսափը  
դեպի ետուալ...

Նրա շուրջը,  
վրան  
իջնում ե ահա աղջամուղջը:  
Թանձրանում ե վուալը:  
Կորչում ե մշուշում շրջագլիծը լուսե: —

Արդեն ետուալը  
դողում ե, վոնց վոր տերեվ, գալիքների անից:

— Լսեք, լսեք, լսեք. —  
եղ թաղերի վրա  
շուտով կենն արեվը, վոնց վոր դահիճ...

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

La Commune est morte — vive la Commune!» — Նշանակում է՝ կոմունը մեռավ — կեցցե կոմունը:

**ՊԵՐԼԱՇԵԳ.** — Գերեզմանատուն Փարիզում:

**ՇԱՆ ԳԵԼԻԳԵ.** — Փարիզի լավագույն փողոցներից մեկը:

**ԿՈՆԿՈՐԳ.** — Համաձայնության հրապարակը Փարիզում:

**ԲԵԼԼԻ.** — Բանվորական թաղամաս Փարիզում:

**ՄԵՏՐՈ.** — Ստորյերկրյա ելքորաքարը:

**ՄՈՆԻՏՐԵ.** — Փարիզի հայտնի թաղերից մեկը, ուր կենտրոնացած են զվարճատեղիները:

**ԵՏՈՒԱՂ.** — Փարիզի ամենահարուստ թաղերից մեկը:

**ՈՎԵՐԱ.** — Փարիզի խոշորագույն ուղեբային թաղերն է:

**ՓՐԱՆՍԱԿԱՆ ԿՈՒՆԵՂԻ.** — Փարիզի խոշորագույն զրամատիքական թաղերն է:

**ՄՈՒԼԵՆ — ՌՈՒՃ.** — Հռչակավոր կաֆե շանտան Փարիզում:

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO  
LIBRARY  
540 EAST 57TH STREET  
CHICAGO, ILL. 60637  
TEL. 733-4331  
TELETYPE 733-4331  
FAX 733-4331  
WWW.CHICAGO.EDU

ՀՀ Ազգային գրադարան



NL0351785

48987

hijm

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

226